ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ԹՈՒՄԱՆՅԱՆ» — *Ուսումնասիրություններ և հրապարակումներ*, հատ. 2, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 3000, 472 էջ.

Ներկա ժողովածուն լույս է տեսել ի պատիվ մեծ լոռեցու ծննդյան 100-ամյակի: Այն բաղկացած է երկու մասից: Առաջին մասում զետեղված ուսումնասիրությունները նվիրված են Թումանյանի ստեղծագործությանը, մասնավորապես վարպետության հարցերին: Մայիս Ավդալբեգյանի «Թումանյանը և հայ հին գրականությունը» հոդվածում ցույց է տրված, որ հայ հին գրականությունը Թումանյանի համար եղել է թե՛ ստեղծագործական զինարան, որտեղից նա իր մտորումներին ներդաշնակ ատաղձ է ընտրել սեփական խոսքն ասելու համար, թե՛ իրեն նախնիների հետ ժառանգորեն կապող հոգեհարազատ մշակույթ և թե՛ ժողովրդի ապագային ծառայող բարոյական մեծ ուժ:

«Թումանյանի վարպետության հարցերից». այսպես է վերնագրված ժողովածուում լույս տեսած Էդ. Զրբաշյանի հոդվածը: Այստեղ ընդգծված է Թումանյանի ստեղծագործություններում տեղ գտած բանաստեղծական տաղ յուրահատուկ կառուցվածքը: Հրաժարվելով բանաստեղծական տաղ ամենատարածված ձևից՝ քառատողից, Թումանյանը իր որոշ ստեղծագործություններում ելնելով կոնկրետ իմաստին, պատկերին, նկարագրությանը համապատասխանող արտասանական-շարահյուսական միավոր ստեղծելու պահանջից, կազմել է տարբեր քանակի տողեր ունեցող տներ: Իր ասածը հաստատելու համար Զրբաշյանը կանգ է առել «Դեպի Անհունը» պոեմի վրա:

Թումանյանի և Տերյանի ստեղծագործական ընդհանրությունների հարցին է նվիրված Ռ. Իշխանյանի հոդվածը:

Հովհ. Ղազարյանի ուսումնասիրության մեջ վեր է հանված «Անուշի» ստեղծագործական ողջ պատմությունը՝ սկսած պոեմի մշակման փուլերից մինչև նրանում գործածված չափի, ռիթմի և հնչյունական երանգավորումների բանաստեղծի կողմից կատարված փոփոխությունները:

Զ. Ավետիսյանի հոդվածում բացահայտվում է «Լոռեցի Սաքոն» պոեմի մշակման փուլերը:

Ժողովածուի երկրորդ մասում (Հրապարակումներ) տեղ են գտել բանաստեղծի գրական ժառանգությունից մի շարք անտիպ էջեր՝ բանաստեղծություններ, հոդվածներ, նամակներ, անտիպ հոդվածներ «Դեպի անհունը» և «Հառաչանք» պոեմների սևագրություններից, «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» ուսումնասիրության լրացված և ճշտված տեքստը և այլ նյութեր:

ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆ — *«Հովհաննես Թումանյան»*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 5000, 596 էջ:

Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված այս աշխատությունը բանաստեղծի գիտական կենսագրության անդրանիկ փորձն է և ընդգրկում է նրա կյանքի ու գործունեության առաջին երեսնամյակը՝ 1869—1899 թվականները:

Թումանյանի առաջին կենսագիրը եղել է բանաստեղծն ինքը: Դեռ 1887 թվականին, տասնութամյա հասակում, նա ձեռնարկել է գրելու իր նախնիների պատմությունը, 90-ական թվականներին փորձել է կազմել Թումանյան տոհմի ճյուղագրությունը, իսկ 1905-ին շարադրել է իր համառոտ կենսագրությունը «Լույս» օրացույց-հանդեսի համար:

Բանաստեղծը հետագայում մտադիր է եղել ինքնակենսագրությունը գրել երկու հատորով, բայց նրա մտադրությունը չիրականացավ: Հետագայում այդ գործին ձեռնարկեց նրա դուստրը՝ Նվարդ Թումանյանը, որը, սակայն, իրականացրեց միայն մի սասը՝ «Մանկությունը և պատանեկությունը»: Բանաստեղծի լիակատար կենսագրությունը ստեղծելու հարցը դարձել էր առաջնահերթ խնդիր: Եվ ահա՛ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունը, որ ընդգրկում է Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմության երեք տասնամյակը, առաջին փորձն է այդ ուղղությամբ:

Հեղինակը մենագրությունը շարադրելիս հաշվի է առել Թումանյանի իր իսկ հայացքները կենսագրության ժանրի վերաբերյալ: Նա այն կարծիքին է եղել, որ ամեն մի գրողի գրվածքների մեջ, գոնե մասամբ, «ապրում է ինքը՝ գրողը»: Առաջնորդվելով այս տեսակետով, Ա. Ինճիկյանը Թումանյանի կյանքի պատմությունը շարադրել է նրա երկերի ստեղծագործական պատմության հետ սերտորեն կապակցված:

Մենագրության համար որպես աղբյուրներ ծառայել են բանաստեղծի ինքնակենսագրական և հուշագրական երկերը, գրառումները, նամակները, ժամանակակիցների հուշերը, պարբերական մամուլը և արխիվային նյութերը:

Գիրքը բաղկացած է հինգ գլխից, պատասխանատու խմբագիրն է Էդ. Մ. Ջըրբաշյանը:

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — *«Սովետահայ թատրոնի տարեգրություն»*, գիրք երկրորդ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը՝ 1000, 936 էջ:

Այս հատորը շարունակում է սովետահայ թատրոնի պատմությունը 1941 թվականից: Առաջին հատորը, որ լույս է տեսել 1961 թվականին, ընդգրկում է 1917—1940 թվականների թատերական մշակույթի պատմությունը:

«Սովետահայ թատրոնի տարեգրության» երկրորդ հատորը իր մեջ ամփոփում է 1941—1960 թվականների հայկական սովետական թատերական մշակույթի քառասուն տարվա պատմությունը: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է հայկական դրամատիկական և երաժշտական թատրոնների գործունեությունը ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս, ինչպես նաև՝ մեր հանրապետության ռուսական, ադրբեջանական և քրդական թատրոնների տարեգրությունը: Օգտագործելով արխիվային մեծաքանակ նյութեր, նա ժամանակագրական կարգով մանրամասն տեղեկություններ է տալիս թատրոնների խաղացանկերի, հյուրախաղերի, բեմադրությունների քննարկումների, գեղարվեստական ասմունքի, թատերական կրթության, ռադիոյի և հեռուստատեսության դրամատիկական հաղորդումների, թատերագիտական գրականության, դրամատուրգների, թարգմանիչների, ռեժիսորների, կոմպոզիտորների և բեմական արվեստի այլ գործիչների մասին: